

**Ա.Չ. ПЕТРОСЯН**

**ПРОЯВЛЕНИЕ СИНОНИМИИ ТЕРМИНОВ В  
НАУЧНО-ТЕХНИЧЕСКОЙ ЛЕКСИКОГРАФИИ**

Рассматриваются случаи недопустимой синонимии терминов в научно-технических словарях. Синонимия встречается не только в словарях, но и в научной и учебной литературе, искажая научное слово. Даются рекомендации по упорядочиванию употребления терминов.

**Ключевые слова:** терминология, словарь терминов, недопустимые синонимы-термины, необходимость упорядочивания употребления терминов.

**H.Ts. PETROSYAN**

**MANIFESTATIONS OF THE TERM SYNONYMY IN THE SCIENTIFIC  
AND TECHNICAL LEXIOGRAPHY**

The cases of inadmissible synonymy of terms in scientific and technical dictionaries are considered. They can be found not only in dictionaries, but also in scientific and academic literature, distorting the scientific speech. Proposals to regulate the use of terms are made.

**Keywords:** terminology, dictionary of terms, inadmissible synonymic terms, need of regulating the use of terms.

ՀՏԴ 81(0.032) (479.25)

**Վ.Մ. ԽԱՀԱՏՐՅԱՆ**

**ՂԱՀԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ԵՐԿԵՐԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ  
ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Ներկայացվել են Ղազար Փարպեցու «Պատմության» և «Թղթի» մինչ օրս հայտնի ձեռագրերի, այդ թվում՝ և պատահիկների վերաբերյալ տեղեկություններ, անդրադարձ է կատարվել դրանցում առկա լեզվական տարբերություններին: Փորձ է արվել՝ պարզելու, թե որ իրողություններն են նախնական, որոնք են ընդօրինակողների նորամուծությունների և միջամտությունների արգասիք: Որոշ դիտարկումներ են արվել նաև քննական բնագիրը կազմողների սրբագրությունների վերաբերյալ, կատարվել են ճշգրտումներ:

**Առանցքային բառեր.** երկ, ձեռագիր, պատահիկ, ընդօրինակություն (գրչագրություն), քննական (գիտական) բնագիր, բառատարբերակ, բառաձև:

**Ներածություն:** Ղազար Փարպեցու «Պատմության» և «Թղթի» քննական բնագիրը կազմել են Գ. Տեր-Մկրտչյանը և Ստ. Մալխասյանցը՝ որպես հիմք ունենալով հրապարակում եղած ձեռագրերը և մինչ այդ իրականացված տպա-

գրությունները [1]: Գիտական հրատարակության առաջաբանում հրատարակիչները որոշակի տեղեկություն են հաղորդում ձեռագրերի և նախորդ տպագրությունների վերաբերյալ: Պարզվում է, որ Փարպեցու երկերի մինչ այժմ հայտնի ամենահին ամբողջական ձեռագիրը 1672 թ. Բաղեշում ընդօրինակել է Գրիգոր երեցը: Ահա թե գիտական բնագրի առաջաբանում ինչ է ասվում այդ ձեռագրի վերաբերյալ. «Ձ.ն (= B) ներկայումս միակ մայր ձեռագիրն է, որ իբրև աղբիւր է ծառայել մինչև այժմ կատարուած թէ՛ Պատմութեան և թէ՛ Թղթի բոլոր տպագրութիւններին և եղած միւս ընդօրինակութիւններին (էջմիածնի № 1688 ձեռագրին, Վենետկի օրինակին և Վիեննայի օրինակին): Նա ծառայել է տպագրութիւնների համար աղբիւր ոչ անմիջապէս, այլ միջնորդութեամբ անխնամ ընդօրինակութիւնների:... Ղազար Փարպեցու Պատմութեան և Թղթի ներկայ հրատարակութեան մէջ առաջին անգամ գործ է դրուած այս մայր Ձեռագիրը՝ համեմատութեան համար» [2]: Պատմությունն առաջին անգամ հրատարակվել է 1793թ. Վենետիկում: Պարզվում է, որ այս հրատարակությանը հիմք է ծառայել 1774թ. էջմիածնում Սիմեոն կաթողիկոսի պատվերով Մայր ձեռագրից ընդօրինակված տարբերակը, որն էլ, գիտական բնագրի հրատարակիչների հավաստմամբ, սխալաշատ է [2]: Բացի վերոհիշյալից՝ հայտնի են նույնպես վենետիկյան երկու այլ տպագրություններ, սակայն այս անգամ երկուսն էլ Թղթի հետ միասին [3]: Կարևոր է հիշատակել, որ «Պատմության» այս երկու հրատարակությունները գլխավորապես հիմնված են առաջինի վրա, սակայն ուղղվել են մի քանի ակնհայտ վրիպակներ, և որ ավելի էական նշանակություն ունի, հենց արդեն երկրորդում օգտագործվել են Ս. Սահակի տեսիլքի և մեկնության հատվածի՝ ճառընտիրներում եղած հնագույն օրինակները: Բավական է ավելացնել, որ երրորդն էլ իր հերթին արտատպություն է նախորդից [2]: Ինչ վերաբերում է «Թղթին», ապա այն նախորդի նման ևս քննական բնագրի կազմումից առաջ երեք տպագրություն է ունեցել՝ հիշյալ երկուսը և սրանց նախահիմք հանդիսացող հրատարակությունը, որ 1853թ. Մոսկվայում իրականացրել է Մ. Էմինը [3]: Հենց այս առաջին տպագրության առաջաբանից իմանում ենք, որ 1829թ. էջմիածնի մատենադարանում եղած Մայր ձեռագրի վերջնամասում «Թուղթն» առաջին անգամ նկատել են Հովհաննես արքեպիսկոպոս Շահխաթունյանը և Մսեր վարժապետ Զմյուռնացին: Այստեղից էլ մեկական օրինակ արտագրել են իրենց համար: Ինչպես պարզվում է, հետագայում դրանք տրամադրել են Մ. Էմինին, և այս արտագրությունների համեմատ էլ կատարվել է առաջին տպագրությունը [4]:

Բանասերների գիտական հետազոտությունների ընթացքում հայտնաբերվել են ևս մի քանի պատառիկներ (այդ թվում և Սահակ կաթողիկոսի տեսիլքի հատվածը), որոնք կարող են լուրջ նշանակություն ունենալ նախնական մի շարք

իրողությունների վերհանման և աղարտված բնագիրը վերականգնելու հարցում: Ինչպես և կտեսնենք ստորև, եղած ամբողջական ձեռագրերում և համապատասխան պատառիկներում նկատվում են լեզվական որոշակի տարբերություններ:

**Դիտարկումներ Ղազար Փարպեցու երկերի ձեռագրերի լեզվական տարբերությունների շուրջ:** Ելնելով առկա ձեռագրերից, մինչ այդ իրականացված տպագրություններից և լեզվական որոշակի գիտելիքներից՝ Գ. Տեր-Մկրտչյանը և Ստ. Մալխասյանցը 1904 թ. Թիֆլիսում տպագրում են Փարպեցու երկերի գիտական բնագիրը: Հրատարակիչներն այնուամենայնիվ արձանագրում են ուղղումների ոչ վերջնական լինելու մասին՝ նշելով. «...ընթերցողին մնում է հաւատալ մեր հաւաստիացմանը, մինչև որ լոյս տեսնի Փարպեցու մի նոր քննադատական հրատարակութիւն» [2]: Եվ իրոք, Բ. Սարգսյանի և Ն. Բյուզանդացու գրախոսություն-քննությունները ցույց են տալիս, որ այն կամա թե ակամա սխալաշատ է, Բյուզանդացու խոսքով «կատարեալ ուսումնասիրութիւնն կարող էր սրբագրել զայնոսիկ 400 անգամ, միտ դնելով մատենագրին լեզուին յատկութեանց և պատմութեան ընթացքին» [5]:

Ինչպես ներածության մեջ արդեն ասվել է, 1672 թ. գրչագրված Մայր ձեռագրից Սիմեոն կաթողիկոսի պատվերով 1774 թ. էջմիածնում ընդօրինակված ձեռագիրը սխալաշատ է [2]: Եթե անմիջականորեն մեկմեկուց արտագրված ձեռագրերում նկատվում են հնչյունական, բառային և քերականական բազում տարբերություններ (իսկ այդպիսի փաստեր բերվում են հենց քննական բնագրում՝ տողատակին), ապա աներևակայելի է, թե V - XVII դարերի գրչագրական ճանապարհի անցած աշխատություններն ինչպիսի այլափոխությունների են ենթարկվել: Վերջինս մասամբ ապացուցվում է հայտնաբերված հնագույն պատառիկների տրամադրած լեզվական իրողություններով: Այս առումով ուշագրավ է հնագույն պատառիկի հրատարակիչների հետևյալ միտքը. «Դժվար է պատկերացնել՝ V դարի երկը մինչև 1672 թ. ձեռագրին հասնելը քանի տասնյակ ընդօրինակություններ է ունեցել և ինչպիսի այլափոխություններով, աղավաղումներով ու «խմբագրում - սրբագրություններով» հասել մեզ: Ընդօրինակությունների միջոցին առաջացած ակամա վրիպումներն իսկ բավական էին, որպեսզի այսօրվա բանասիրությունը նախնական բնագիրը վերականգնելու մտահոգությունն ունենար» [6]:

Վերոհիշյալ դիտողության հեղինակներն այնուհետև, նկատի առնելով, որ XVII դարից հին և ամբողջական ձեռագիր հայտնաբերելու հույս գրեթե չկա, բնագիրը վերականգնելու մեկ ելք են վկայակոչում. «Ուստի մնում է մեկ ելք. ձեռագրական հավաքածուներում երևան բերել Պատմությունից քաղված հատ-

վաճներ (ցանկալի է՝ XVII դարին նախորդող շրջանին), պրպտել երբեմնի ամբողջական ձեռագրերի պոկված-պահպանված հատակոտորներ (պահպանակ կամ պատառիկ).... և բանասիրական քննության զուգորդմամբ քննել-վերականգնել բնագրի աղավաղված տեղիները» [6]: Հենց այդպիսի մի պատառիկ էր իրենց իսկ հայտնաբերածը, որի մասին հայտնի է հետևյալը. ՍՍՀՄ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի հայկական հավաքածուից 1916 թ. Վանի հավաքածուի կազմում մուտք գործած A-82 ձեռագրին որպես պահպանակ է գործածվել Փարպեցու «Պատմության» «պոկված կամ պահպանված» մեկ թերթ: Իսկ ձեռագրի երկու հիշատակարաններում նշվում է «րաբունապետն Եսայի», որից և պատառիկի հրատարակիչները եզրակացնում են, որ խոսքը Գլաճորի համալսարանի նշանավոր Եսայի Նչեցու (1284-1338 ) մասին է, ուստի այն պետք է գրված լինի նախքան մահը՝ նրա րաբունապետության օրոք: Ինչ վերաբերում է հիշյալ պատառիկին, ապա վերջինիս տառանշաններն ուղղակի հուշում են շատ ավելի հին լինելու մասին, հրատարակիչների կարծիքով՝ X-XI դար [6]:

Հայերենագիտության բնագավառում տարածված է այն տեսակետը, որ գրաբարը ժամանակի համընդհանուր ժողովրդախոսակցական լեզուն է: Անշուշտ, դա թյուր կարծիք է, քանի որ գրի և գրչության մշակներն ի սկզբանե փորձել են հայերենը, մասնավորապես իրենց խոսակցական լեզուն որոշակի մշակության ենթարկել՝ հիմնվելով տարածված իրողություններին, մասամբ նաև ազդվելով օտար լեզուներից, հատկապես հունարենից: Այսպիսով, խոսակցական լեզուն գրավոր ավանդույթի սկզբնավորման առաջին իսկ օրվանից հղկվել է և ի վերջո վերածվել գրական-գրքային լեզվի: Իհարկե, նշված խոսակցական լեզուն յուրաքանչյուր գրողի համար հավանաբար իր իսկ բարբառն է եղել: Եզնիկ Կողբացու հետևյալ դիտողությունը. «քանզի յորժամ մեք ասեմք՝ թե սիք շնչէ, ստորնեայք ասեն՝ այս շնչէ», ինչպես և ավանդված երկերում հիմնական իրողություններից տարբերվող և բարբառային երանգով լեզվական տարրերը խոսուն վկա են V դարում նաև բարբառների գոյության [7]: Ցավոք, հայերենի գրավոր մշակույթի սկզբնավորման առաջին դարերի որևէ ձեռագիր մեզ չի հասել: Եղած ձեռագրերի վրա աշխատանքն ու դրանց համեմատական քննությունը մեզ թույլ են տալիս եզրակացնելու, որ հետագա դարերի ընթացիկ նակություններում գրի և գրչության ներկայացուցիչները որոշակի միջամտություններ են կատարել՝ տարբեր երկերի ձեռագրերում առաջացնելով լեզվական ընդհանրություն:

Փարպեցու երկերի մինչ այժմ հայտնի թե՛ ամբողջական ձեռագրերի և թե՛ պատառիկների միջև առկա են լեզվական ուշագրավ տարբերություններ:

Նման իրողություններ հաճախ նկատվում են նաև ձեռագրերից կամ պատառիկներից յուրաքանչյուրում: Անգամ միևնույն նախադասության մեջ է հնարավոր տեսնել նույն բառի հնչյունական տարբերակներ կամ քերականական զուգաձևություն, ինչպես՝ «մեծաւ առաքինութեամբ և խստամբեր վարիւք, բազում և այլ սուրբ վարուք կրօնաւորօք և աղօթասէր եղբարք» (13):

«Պատմության» հնագույն պատառիկում [6] առկա են ՆՀԲ-ին ոչ հայտնի հետևյալ բառերը՝ *սնապուն, դաշտանապուն, խաւղաման և խլնանոց*: Առաջին երկուսի փոխարեն ամբողջական ձեռագրերում, ապա և գիտական բնագրում առկա է «*տունս դաշտանաց և աղտեղութեան*», իսկ հաջորդ երկու բառերը բացակայում են: Այդ բառերի քննությունը կատարել ենք մեկ այլ հոդվածում [8]:

Քննական բնագրի համապատասխան հատվածի հետ անմիջական համեմատությունից նաև պարզվում է, որ *այլ, հանդուժել, աշխարհակորոյս* բառերը պատառիկում հետևյալ հնչյունակազմով են՝ *այդ, հանտուժել, աշխահակորոյս* [6]: Վերջինն ակնհայտորեն վրիպակ է, իսկ նախորդները գուցե և սկզբնական են:

Մյուս երկու պատառիկներից մեկը հայտնաբերել է հայագետ Ն. Պողարյանը Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի մատենադարանի 1419 թ. ընդօրինակված №1 հսկայակերտ ճառընտիրի II հատորում (էջ 720բ - 728բ), որը համապատասխան է գիտական բնագրի 12-28 էջերին [9]: Իսկ հաջորդը, առաջինի հրատարակիչների հավաստմամբ, հայտնի է դարձել մեր Մատենադարանի «Ցուցակ ձեռագրաց»-ով, որի համաձայն՝ գտնվում է այդ հավաքածուի № 4803 գրչագրում: Ի դեպ, այս վերջինն էլ ընդօրինակված է հայ մատենագրության մեջ քաջ հայտնի Գրիգոր Ծերենց խլաթեցու ձեռքով (ապրել է 1349-1425 թթ.) և համապատասխանում է քննական հրատարակության 18-38 էջերին [6], որ մասամբ ընդգրկված է Ն. Պողարյանի հրապարակած հատվածում: Դիտելի է, որ այս երկու պատառիկները ժամանակային կտրվածքով համընկնում են:

Բառերի՝ Մայր ձեռագրում առկա հնչյունական և բառակազմական որոշ տարբերակներ գիտական բնագրում ուղղվել են տարածված ձևերով. *յանկուցանել /հանգուցանել/, մանուգ, մանգութին /մանուկ, մանկութին/, մանկաղ /մանգաղ/, թարքմանել /թարգմանել/, սուք /սուգ/, ստոյք /ստոյգ/, ցանգալ /ցանկալ/, թուղտ /թուղթ/, գունտ /գունդ/, ընդրել /ընտրել/, ըմբել /ըմպել/, անվաղճան /անվախճան/, սղխալանք /սխալանք/, հարտէշ /խարտէշ/, ընձայ /ընձայ/, անձկալի /անձկալի/, ընթանուր /ընդհանուր/, գեղ /գիղ/, աղճիկ /աղջիկ/, դժար /դժուար/, անկոսնել /անգոսնել/, առբանեկութին /արբանեկութին/, գոռի /գրոհ/, չորեքարիւր /չորեքհարիւր/, ուղեղ /ուղիղ/, պեղծ /պիղծ/, գեղաքաղաք /գիւղաքաղաք/, դղեկ /դղեակ/, կրսեր /կրտսեր/, բաւանդակ /բովանդակ/, զինաւորեալ /զինուորեալ/ [2]: Տրված բառերից շատերը (*ընթանուր, մանուգ* և այլն)*

Մայր ձեռագրում նշված տարբերակով վկայվել են շատ օրինակներով, նույնիսկ ամբողջովին:

Պողարյանի հայտնաբերած պատառիկի և գիտական բնագրի համապատասխան հատվածի համեմատությամբ բացահայտվում է հետևյալ տարբերությունը. *ընդիր* /ընտիր/, *ակտել* /օգտել/, *սգացուցանել* /զգացուցանել/, *երիրել* /յերիրել/, *սիղովբայ* /սիլովբայ/, *վաղխճանիմ* /վախճանիմ/, *ըմբեմ* /ըմպեմ/, *ընթանուր* /ընդհանուր/, *խնդրիս* /խնդիրս/, *կաթուղիկոս* /կաթողիկոս/, *զիղիս* /զեղիս/, *եզամոլ* /իզամոլ/, *բաւանդակ* /բովանդակ/, *լիեալ* են /լեալ են /, *աչ* /աջ/, *ցամի-նեսեսան* /ցամենեսեսան/ [9]:

17-րդ դարում գրչագրված ամբողջական ձեռագրում և 15-րդ դարին պատկանող պատառիկում, ինչպես և նկատվում է, առկա են բառերի՝ գրաբարյան օրինաչափությունից շեղվող միևնույն հնչյունական տարբերակները (*ընթանուր*, *ընդիր*, *բաւանդակ*), որոնք կարող էին պատկանել հենց Փարպեցու գրչին:

Հատկապես ուշագրավ է այն փաստը, որ Պողարյանի հայտնաբերած պատառիկում (1419թ.) գիտական բնագրի *պատասխանատուութիւն* օրինակի փոխարեն *պատասխանատրութիւն* է [9]: Ի դեպ, *-տրութիւն* կազմությամբ դրսևորումներն առավել հատուկ են հետմեսրոպյան շրջանի գործերին [10] և [11], ասել է թե, հնարավոր է, որ Փարպեցին հենց հին պատառիկի բառակազմական տարբերակն է գործածել: Առավել ուշագրավ է, որ Մայր ձեռագրում առկա են *հրամանատրութիւն* /հրամանատուութիւն/, *պատասխանատրութիւն* /պատասխանատուութիւն/, որոնք նույնպես կարող էին սկզբնական լինել՝ հարելով խոսակցական-բարբառային իրողություններին:

Հարկ ենք համարում նաև նկատի առնել ներքոհիշյալ մի քանի փաստերը:

Մայր ձեռագրի *անընդդիմակաց* բառը քննական բնագրում ուղղել են *անընդդիմակայ* (տողատակին տրված են ձեռագրերի և նախորդ տպագրությունների ընթերցումները)՝ հավանաբար նկատի ունենալով այսպես մյուս երեք վկայությունները: Մինչդեռ V դարի այլ գործերում վկայվել են օրինակներ երկու հիմքերով էլ [10] և [11]: Նույնպես, ի հաշիվ թվով շատ հոդակապով տարբերակների, սրբագրել են հետևյալները՝ *շահստան*, *խրատրոտ*՝ դարձնելով *շահաստան* և *խրատրոտ*: Հոդակապով և անհոդակապ մեկական օրինակներից երկու բառ անհոդակապ են դարձրել, իսկ մեկ բառ՝ հոդակապով՝ *աղքատսիրութիւն*, *ձեռնհաս* և *քաղցրաբանութիւն*: *Նախագոյն* և *նուազպտուղ* բառերը վերածել են *նախագոյն* և *նուազապտուղ* տարբերակների: Չենք կարծում, թե անհոդակապ տարբերակները հոդակապով դարձնելը տեղին է, քանի որ դրանք ամենայն հավանականությամբ սկզբնական են եղել՝ բնորոշ լինելով կենդանի խոսողությանը:

Համաձայն նույն սկզբունքի՝ իհարկե, կարող ենք ուրիշ շատ «ուղղումներ» կատարել, այսպիսով նաև բացառել ինչպես վերոհիշյալ, այնպես էլ այլ բնույթի մի շարք բառատարբերակների և բառաձևերի գոյությունը: Բայց և այսպիսի ուղղումները կարող են շատ դեպքերում հանգեցնել սխալների: Օրինակ, չենք կարող միանշանակ պնդել, որ եթե տվյալ տարբերակը ձեռագրում համեմատաբար շատ վկայություններ ունի կամ առավել տարածված է ավանդված ձեռագրերում, քան մյուսը, ապա այն նախնականն է: Նույնիսկ շատ հնարավոր է, որ մյուսը ենթարկված լինի հետագա փոփոխությունների: Բանասիրական ձգտումներն ուղղված են նորանոր փաստերի հայտնաբերմանը, որոնց համաձայն էլ պետք է վերականգնել և հնարավորինս նախնական տեսքի բերել այս կամ այն ձեռագիրը: Նկատվելիք այն իրողությունները, որոնց սկզբնական լինելու հավանականությունը ավելի մեծ է, պետք է ներառել հետագա հրատարակություններում:

Առաջինը հիշատակված պատահիկի հրատարակիչները գիտական բնագրի համեմատ այլ հնչյունակազմով միավորների առումով նշում են. «Զարմանալու ոչինչ չկա, եթե խորհենք, որ Փարպեցու հնագույն պատահիկում ավանդված ենք գտնում հենց բարբառային հնչումը» [6]: Մինչդեռ նույն իրողությունը Ն. Պողարյանը համարում է ուղղագրական թերություններ՝ միակ առավելությունը դիտելով իր իսկ խոսքով այն «բազմաթիվ ընթերցումները, որոնց շնորհիվ հնարավոր է բնագրի մեջ կատարել կարևոր սրբագրություններ», և օրինակ է բերում. «Ատոնց մեջ ամենեն նշանավորն է «հմուտ *երգողական* տառիցն» ասության փոխարեն ձեռագրիս տված ընթերցումը «հմուտ *քերթողական* տառիցն» [9]:

Գիտական բնագրի համաձայն՝ *Տարօն* տեղանվան երեք օրինակներից զուգահեռ առկա է նաև *Տարուն* տարբերակը: Հետաքրքրական է, որ վերջինս Ն. Պողարյանի հայտնաբերած պատահիկում (1419թ.) նույնպես *Տարօն* հնչյունակազմով է [9]: Ուշագրավ է նաև «Պատմության» մեջ առկա *մորուք* (մորուք) բառը, որի *o* հնչյունով տարբերակն, ըստ բառարանային տվյալների, ոչ միայն *V* դարից է հայտնի, այլ նաև ավելի տարածված է եղել և, ըստ երևույթին, այսօր էլ ամրագրված է արդի գրական հայերենում, իսկ մյուսը մնացել է բարբառներում:

Քննական բնագրի այն հատվածը, որն ընդգրկում է «Պատմության» երկու *գրեան* օրինակները, համընկնում է Ն. Պողարյանի հայտնաբերած պատահիկին, որում, ի դեպ, *գրենոյն* բառաձևի փոխարեն մի դեպքում *գրերոյն* է [9], որն ավելի կարևոր փաստ է, մանավանդ որ *-եր* հոգնակերտ մասնիկով մի քանի բառաձևեր ևս առկա են Մայր ձեռագրում:

Պողարյանի պատահիկում *ի վանորայս* ձևի փոխարեն *ի վանորեայս* [9] է, որը նույնպես ավանդվել է *V* դարից [12]: *Առաքեալ* բառի հոգնակի գործիականի *առաքելովք* կանոնիկ ձևի փոխարեն առկա է *առաքելալք*. բառը ՆՀԲ-ում նշված

է որպէս ա. և գ. և տրված է հոգնակի գործիականի երկու ձևն էլ [12]:

Հոլովման ժամանակ *ի* վերջնահինջունի անկման առումով, ի հակադրումն գիտական բնագրի, ուշագրավ փաստեր է տրամադրում ոչ միայն մեզ քաջ հայտնի Մայր ձեռագիրը, այլև Ն. Պողարյանի հայտնաբերած պատառիկը [9]: Մայր ձեռագրում առկա են՝ *յոգոց* (յոգուց), *որդոյ* (որդույ), պատառիկում՝ *բարոյ*, *երանելոյ*, *հոգով*, *եկեղեցոյ*, *ասորոց*, *մանկոյ*, *նախնոյ*, *աւագանոյ*, *աւագանով*, *եղբարորդոյ*, *գինով* [9], որոնք մի քայլ են հետագա համակարգային փոփոխության:

Մինչդեռ շատ տարօրինակ է, որ, սրան հակառակ, նույնիսկ ոչ *ի*-ով վերջավորվող *ո* հոլովման բառերը Մայր ձեռագրում, բացառությամբ մի քանի պատահական դեպքերի, հատկապէս *ւոյ*-ի են հանգած՝ *խորհրդոյ*, *մարդոյ*, *գիշերոյ*, *մարգարտոյ*, *միայնոյ*, *գետոյ*, *սրբոյ*, *օղոյ*, *սեղանոյ*, *խնդրոյ*, *այգեստանոյ*: Այս ամենը, անշուշտ, պայմանավորված է գրաբարին ըստ արժանվույն չտիրապետողների՝ գրչագրությունների ժամանակ իբր «գրաբարյան ձևերը» վերականգնելու ձգտմամբ:

Չի բացառվում, որ Փարպեցին ավանդել է հենց 1419 թ. թվագրումով պատառիկի՝ հոլովման ժամանակ *ի* վերջնահինջունի անկմամբ օրինակները, որոնք հավանաբար տարածված են եղել ժամանակի խոսակցական լեզվում և բարբառներում:

Հայտնի փաստ է, որ գրաբարում *ա* և *ո* ձայնավորներից հետո, բացառությամբ հրամայական եղանակի բայաձևերի, դերանունների, օտար ծագման հատուկ անունների ուղիղ ձևերի, *ապա* և *ահա* բառերի, բառավերջում սովորաբար առկա է *յ* [13]: Սակայն Փարպեցու երկերի Մայր ձեռագրում նկատվում են որոշ շեղումներ՝ *օգնեա՛յ*, *յիշեա՛յ*, *ջանա՛յ*, *ագո՛յ* (ագուցանել), *ուսո՛յ* (ուսուցանել), *ժանո՛յ* (ձանուցանել), ընդ *դմայ* (*դա* ցուցական դերանվան տրականը), *ապայ* [2]: Կա՛մ ենթադրելի է, որ նշված իրողությանն անտեղյակ գրիչներն են մյուս օրինակների համաբանությամբ վերջում *յ* ավելացրել, կա՛մ էլ ի սկզբանե բոլոր բառերի ու բառաձևերի վերջում *ա* և *ո* ձայնավորներին հաջորդել է *յ*, ուղղակի ինչ-որ ժամանակ վերջինս դադարել է արտասանվելուց, ուստի նաև հետագա գրչագրությունների ժամանակ կամա թե ակամա չի գրվել: Հայերեն այլ ձեռագրերում էլ կարելի է բոլոր տեսակի բառերի ու բառաձևերի վերջում նշված ձայնավորներից հետո, իհարկե, տարբեր համամասնությամբ, և՛ տեսնել, և՛ չտեսնել *յ*-ի գրություն: Մի դեպքում էլ Մայր ձեռագրում վկայված է ընդ *նմա*, սակայն գիտական բնագրում փոխարինված է ընդ *նմայն* անկանոն ձևով:

Մայր ձեռագրի որոշ բառաձևեր քննական բնագրում անհասկանալի պատճառներով փոխարինվել են տարածված ձևերով, թեև նախորդի օրինակներ, ըստ ՆՀԲ-ի [12], ևս հայտնի են գրաբարյան երկերում: Այսպես. *զվճուսցն*

/զվճոցն և զիրովարտակացն/, *երանելովն* Մաշտոցի /*երանելեան*/, *ականջովք* /ականջօք/, *խնդրուածօք* /խնդրուածովք/, *իրիցուն* /երիցուն/, *տեղաց* /տեղեաց/, *կորստի* /կորստեան/, *եղջերք* /եղջիւրք/, *աղբերցն* յորդաբուխ /աղբերացն յորդաբուխ/, *յամօթից* /յամօթոց/: Վաստակոց բառաձևն էլ իր հերթին վերածվել է բոլորովին այլ բառի՝ *վրակաց*՝ թերևս պայմանավորված բառային միջավայրով, չնայած որ նախորդի կիրառությունն էլ բացառելի չէ. «...թէ լցաւ երկիրս ամենայն Հայոց գիտութեամբ Տեառն ի հոգևոր *վրակաց* սուրբ հայրապետին Սահակայ, իբրև զջուրս բազումս որ ծածկեն զծովս» [2]:

Ստ. Մալխասյանցը քննական բնագրում արված սրբագրությունների մասին խոսելիս գրում է. «Երրորդ լծորդութեան անորոշ դերբայի վերջաւորութիւնները միշտ դրել եմ *ել*, փոխանակ *իլ*՝ ի, ինչպէս յաճախ պատահում էր թէ՛ Ձ. -ում և թէ՛ ՏՏ. -ում, այն պատճառով, որ Ձ. -ի մէջ *իլ*՝ ով գրութիւնը սկզբնական չէ եղել, այլ *ի*՝ ն գրուած է քերուածքի վրայ, ինչպէս նշանակուած է ծանօթութիւնների մէջ. նոյնիսկ երբեմն նշմարուած է քերուած սկզբնական *ե*՝ ը: Այս հանգամանքը ինձ իրաւունք տուեց վերականգնել նախնական և ընտիր ուղղագրութիւնը: Նոյնպէս եմ վարուել և երրորդ լծորդութեան բայերի անց. անկատար եզ. Գ. դէմքի *իւր* վերջաւորութեան նկատմամբ, փոխելով ընտրելագոյն *էր* ձևին» [2]: Չի բացառվում, որ Մայր ձեռագրում ուղղումները կատարվել են այլ ձեռագրերի հիման վրա:

**Եզրակացություն:** Հնագույն ձեռագրերում առկա այն իրողությունները, որոնք առհասարակ հատուկ են հայերենի որևէ փուլի կամ շրջանի դրսևորմանը կամ բարբառներին, ոչ մի դեպքում չենք կարող համարել ոչ նախնական, քանի դեռ ավելի հին ձեռագրերի ի հայտ գալով նոր փաստեր չեն բացահայտվել: Ձեռագրերում առկա բարբառային եզակի իրողություններն ընդհանրական ձևերով փոխարինելու միտումը կարող է մեզ շատ հեռացնել ակունքներից: Հետագա ընդօրինակություններով մեզ հասած յուրաքանչյուր երկ պետք է ենթարկվի լեզվական մանրազնիւն քննության՝ բոլոր տեսակի ձեռագրերի ու պատառիկների օգտագործմամբ: Նոր ի հայտ եկած ամեն իրողություն կարևոր նշանակություն ունի: Հայերենագիտությունը, հիրավի, դեռ շատ անելիք ունի: Սույն աշխատանքը կարող է իր փոքրիկ նպաստը բերել հայերենի պատմական բառագիտությանն ու առհասարակ հայոց լեզվի պատմությանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Տէր-Մկրտչեան Գ.**, Ղազար Փարպեցու ձեռագրերը, Արարատ, 1901, էջ 542– 549: Նույնը՝ Էջմիածին, 1902:
2. Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան (աշխատութեամբ **Գ. Տէր-Մկրտչեան, Ստ. Մալխասեան**), Տփղիս, 1904:
3. **Գոյումճյան Տ.**, Ղազար Փարպեցի. Մատենագիտություն, Ե., 1999:
4. Ղազարայ Փարպեցոյ Թուրք առ Վահան տէրն Մամիկոնէից, հրատարակութեամբ **Մկրտիչ Էմինի**, Մոսկուա, 1853:

5. **Սարգիսեան Բ.**, Երկու խօսք Ղ. Փարպեցոյ նոր տպագրութեան աղթի, Բազմավէպ, 1905, էջ 52-62, 129-133, **Ն. Բիզանդացի**, Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ազաթանգեղոսի և Ղազարայ Փարպեցոյ, Յուշարձան, 1911, էջ 173-174:
6. **Մուրադյան Պ., Յուզբաշյան Կ.**, Ղազար Փարպեցու նորահայտ պատահիկը, Բանբեր Մատենադարանի, 1973 (№ 11), էջ 7-32:
7. **Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմութիւն, II մաս, Ե., 1951:
8. **Խաչատրյան Վ.**, Փարպեցու երկերից ՆՀԲ-ում չվկայված բառերի շուրջ, Կանթեղ. գիտական հոդվածների ժողովածու, 1 (30), Ե., 2007, էջ 136-145:
9. **Եպս. Պողարյան Ն.**, Նորագյուտ հատված Ղազար Փարպեցու «Հայոց Պատմութեան», Բանբեր Մատենադարանի, № 8, 1967, էջ 264:
10. **Հովհաննիսյան Լ.**, Գրաբարի բառապաշարը (V դար), Երևան, 2006:
11. **Առաքելյան Վ.**, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության (V դար), Երևան, 1981:
12. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, **Գ. Աւետիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Աւգերեան**, Վենետիկ, 1836-1837 (ՆՀԲ):
13. **Աբրահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976:

**В.М. ХАЧАТРЯН**

### **О ЯЗЫКОВЫХ РАЗЛИЧИЯХ РУКОПИСЕЙ ПРОИЗВЕДЕНИЙ ЛАЗАРЯ ПАРПЕЦИ**

Приводится информация об известных рукописях, включая небольшие фрагменты “Истории” и “Письма” Лазаря Парпеци. Рассматриваются языковые различия. Сделана попытка выявить реалии, которые являются оригинальными, а также реалии, которые являются результатом нововведений и вмешательств копировщиков. Сделаны некоторые замечания по корректуре составителей научного оригинала и некоторые уточнения.

**Ключевые слова:** творчество, рукопись, фрагмент, копирование, научный оригинал, вариант слова, словоформа.

**V.M. KHACHATRYAN**

### **ON LANGUAGE DIFFERENCES OF THE MANUSCRIPTS OF GHAZAR PARPETSIS WORKS**

First some information on the known manuscripts including small bits by Ghazar Parpetsi's “History and Letter” has been introduced, then the language differences existing in the mentioned works are considered. An attempt has been made to reveal the realities which are original and those that are a result of innovations and interventions made by copyists. Some observations have also been carried out concerning the proof-readings of the compilers considering the original, some specifications have been made.

**Keywords:** writing, manuscript, bit, copying, scientific original, word-variant, word-form.